զաւուրս չորեքտասան և փետր.ի 12ին ելին ի ճանապարհ ընդ Այդու Բիջոյի և յետ եօթն աւուրց հասին ի Տիքսէ՝ որ է առաջին գիւղաքաղաքն Հապէշին։ Իսկ Թովմաճանն ոչխար մի իբր մատաղ հոգւոյ հաց արար աղքատաց՝ վասն ազատելոյն ի մահմետական և ի բարբարոսաց երկրէն։ Եւ ի դառնալն եւս ի Հապէշու՝ նոյն Թովմաճանն ի տեղիս յայս ի Տիքսէ 2 ոչխարս արար հոգւոյ հաց աղքատաց, վասն ազատելոյն ի տիմարազունեղ և անբան և անասուն մարդկանէ, որպէս յընթացս պատմութեանս իմասցիս։ Եւ զաւուրս 6 ի Տիքսէ նստան և ապա յետ 9 աւուր հասին ի ԱՏՈՒԱ Մարտ 5ին, որ է բաշայեանիստ քաղաքն Ձզմաթին, այսինքն Բաշա Միքայէլին։ Եւ այս Ձզմաթի Միքայէլն յոյժ բուռն զօրութեամբ և անողորմ մարդ է, քանզի գործեալ յանցանքն յանցաւորաց առ ո՛ր անդամ մարմնոյն վերաբերի, զնոյն հատանէ. զոր օրինակ եթէ աչօք է՝ հանէ զաչսն, եթէ ձեռօք կամ ոտիւք՝ հատանէ զնոսին, ըստ այսմ իմա՛ և զմնացեալսն։

Արդ ի նմին ժամանակի յորում հասին Ատուա Թովմաճանն և Այդու Բիջոն, այս Ձզմաթի Միքայէլն ոչ էր անդ, այլ ի պատերազմ գնացեալ էր 5 աւուրք ճանապարհաւ հետի. վասն որոյ պարտաւորեցան գնալ առ նա՝ և գնացին. և յորժամ ներկայացան առաջի նորա, կոչեաց զթարգմանն իւր և սկսաւ խօսիլ ընդ Թովմաճանին մի ըստ մէջէ՝ թէ ուստի՞ գաս, և վասն է՞ր եկեալ ես յերկիրս յայսոսիկ, և զինչ է արհեստ քո։ Իսկ Թովմաճանն երկուցեալ վասն ընչիցն ոչ ասաց թէ վաճառական եմ, այլ ասաց թէ բժիշկ եմ, և հանեալ զընծայսն զոսկեհուռ մեռաքսեայ սախրզու շալ գօտի մեծ ետ նմա։ Եւ նա մեծաւ շնորհակալութեամբ էառ և սիրով պատուեաց զԹովմաճանն և ասէ. Ես ի վաղուն դառնալոց եմ ի քաղաքն Ատուա և կինն իմ լուայ թէ հիւանդացեալ է, ուստի բարւոք եղեւ գալդ, զի գնացեալ տեսցուք զնա։ Եւ այսպէս բանիւ իւրով ըմբռնեցաւ Թովմաճանն և ոչ թոյլ ետ նոցա երթալ և դարձան ընդ իշխան Բաշային ի Ատուա վերստին. և տարաւ զԹովմաճանն ի պալատ իւր առ կինն և ետես զի հազայր, և կալաւ զձեռն և հայեցաւ զերակն իրրեւ զբժիշկ, և զմբտաւ էած թէ ի Կ. Պոլիս իւր դուստրն այնպէս հազայր և բժիշկն եկեալ հաւուր իւղով զկուրծն շփելով և օծանելով և զնոր բամպակն ինկեալ ի վերայ հրոյ, ջերմ ջերմ ի վերայ կրծոյն դնելով բժշկեաց, ըստ այսմ կերպի արար և կնոջն բաշայի զաւուրս երիս, մի մի կթղայ եւս տայր ըմպել զչայս նմա, և այսպէս բժշկեցաւ կինն։ Եւ ել համբաւ զնմանէ թէ բժիշկ ոմն եկեալ է։ Եւ այրն կնոջ՝ Ձզմաթի Միքայէլն շնորհակալ լինելով ասէ ցԹովմաճանն. Ասուած զքեզ յատուկ վասն մեր առաքեաց այսր, զի և ես ահա ծեր եմ, ասա ի միասին ապրեսցուք ընդ քեզ։

Իսկ խեղճ Թովմաճանն գնաց տարակուսեալ և տարտամեալ առ Այդոյ Բիջոյի գժտիլ, և խորհիլ ընդ նմա վասն այսր բռնակալին բանիցն։ Եւ նա քաջալերեաց զԹովմաճանն թէ՝ մի՛ երկնչիր, ես զքեզ առ թագաւորն ի կեօնտէր ի ծածուկ։ Եւ կալեալ զոմն ի վարձու՝ առաքեցին ի կեօնտէր առ թագաւորն զգիրն։ Եւ յայնմ միջոցի յամենայն աւուր գնայր Թովմաճանն ի տուն բաշային ընդ Այդու Բիջոյին առ տիկինն։...

Բայց Թովմաճանն գնաց բաշային և ասէ. Ո՞վ Տէր իմ, ես ասա և անդ շրջող բժիշկ չեմ, այլ միայն իմ տանս առնէի բժշկութիւն։ Եւ յայնժամ բաշան եւս արգել զնա, թէ արտաքոյ իմոյ պալատի ոչ ումեք երթիցես ասաց։

Եւ այս Ձզմաթի Միքայէլն յամենայն աւուր առաքէր ռոճիկս Թովմաճանին և Այդոյ Բիջոյին։ Այլեւս ետ Թովմաճանին մին պատուական ջորի. և այսպէս անցին աւուրք 50, դեռ ոչ թոյլ տայր երթալ։

Եւ յետ յիսնից աւուրց եկին երեք անձինք նամակաւն թագաւորին առ Ձզմաթի Միքայէլն թէ՝ Այն նորեկ Թովմաճանն ընդ Այդոյ Բիջոյին թոյլ տացես գալ առ մեզ, զի մեք հրաւիրեալ եմք զնա